

ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ

ՍԵՌԻ ՀԱՏԿԱՆԻՇՈՎ ԲՈՆՈՒԹՅԱՆ ԿԱՆԽԱՐԳԵԼՄԱՆ 2015 ԹՎԱԿԱՆԻ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ԾՐԱԳՐԻ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ ԿԱՏԱՐԱԾ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Հ/հ	Միջոցառման անվանումը	Կատարված աշխատանքը	Ֆինանսավորման աղբյուրը
1	2	3	4
1.	Ընտանեկան բոնության իրազեկման նպատակով հանդիպումներ մարզի քաղաքներում և համայնքներում, բոնորության ենթարկված անձանց պաշտպանության, նրանց տրամադրվող ծառայությունների կազմակերպմանն ուղղված իրազեկում:	1.1 2015թվականի ընթացքում բաժին են դիմել /ուղղորդվել են նաև ՀԿ-ների կողմից/ ընտանեկան բոնության ենթարկված քաղաքացիներ, որոնք սահմանված կարգով ուղղորդվել են համապատասխան իրավասու մարմին, ինչպես նաև ՀԿ-ների կողմից բացված համապատասխան կենտրոններ կամ իրականացվել են անհատական աշխատանքներ:	ՀՀ պետ բյուջե, օրենքով չարգելված այլ միջոցներ
		1.2 Կազմակերպվել են քննարկումներ առողջապահության և ոստիկանության ոլորտի մասնագետների հետ ընտանեկան բոնության ենթարկված անձանց վերաբերյալ տեղեկատվության, հավաքագրման և ուղղորդման աշխատանքների կազմակերպման վերաբերյալ: Մշակվել են ընտանեկան բոնության ենթարկված անձանց ուղղորդման վերաբերյալ առաջարկություններ: Ոստիկանության ԱԳԲ ներկայացուցիչների հետ հանդիպումներ են եղել մարզի կրթական հաստատություններում: Երեխաներին բացատրվել է ընտանեկան բոնություն հասկացությունը:	
2.	«Ընդդեմ բոնության ակտիվության 16-օրյակ» ամենամյան քարոզարշավ:	2.1 «Վորդ Վիժն» միջազգային կազմակերպության հետ մարզի 5 համայնքներում անց են կացվել բոնության դեմ ուղղված հանդիպումներ /դպրոց, բուժ. ծառայություն, ավագանի և այլն/:	ՀՀ պետ բյուջե, օրենքով չարգելված այլ միջոցներ
		2.2 Բաժնի մասնագետները մարզում գործող ՀԿ-ների հետ մասնակցել են տարբեր հեռուստահաղորդաշարերին ընտանեկան բոնության դեմ պայքարի իրազեկման նպատակով:	
3.	Մարզի համայնքներում ` ուսուցիչների, ոստիկանների, համայնքային ծառայողների համար կկազմակերպվեն հանդիպումներ	3.1 Կազմակերպվել են 5 իրազեկման հանդիպումներ-սեմինար պարապմունքներ մարզի տարածաշրջանային կենտրոններում ավագ դպրոցի ուսուցիչների համար: Քննարկվել են ընտանեկան բոնության երևույթի	ՀՀ պետ բյուջե, օրենքով չարգելված այլ միջոցներ

	ընտանեկան բռնության երևույթի իրազեկման և տեղեկատվական նյութերի տրամադրման նպատակով:	վերաբերյալ հիմնահարցեր, տրամադրվել են տեղեկատվական նյութեր: Կազմակերպվել են 3 կլոր-սեղան քննարկումներ ընտանեկան բռնության թեմաներով, մասնակցել են ոստիկաններ, համայնքային ծառայողներ մարզային համապատասխան կառույցներից, ինչպես նաև ԲՈՒՀ-երի դասախոսներ:	
		3.2 Համայնքների ներկայացուցիչների, ոստիկանության աշխատակիցների և ՀԿ-ների ներկայացուցիչների մասնակցությամբ անց են կացվել սեմինար-խորհրդակցություն ընտանեկան բռնության դեպքերի հայտնաբերման և դրանց հետևանքների վերացման վերաբերյալ: Համայնքների գենդերային հանձնաժողովի նիստերում ևս քննարկվել են բռնության՝ մասնավորապես ընտանեկան բռնությանը վերաբերվող օրենսդրական դաշտը:	

Ընտանիքի կանանց և երեխաների
իրավունքների պաշտպանության բաժնի պետ

Ն.Սարգսյան